ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

«31» 03 2026թ. № 19/671

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ 01267191, հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 125/3)

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

ՀՀ պետական պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2026թ. կարիքների համար տնտեսական ապրանքների գնման նպատակով՝ Ծառայության և «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2026 թվականի մարտի 24-ին կնքվել է ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/8-4 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 219,651.60 (երկու հարյուր տասնինը հազար վեց հարյուր հիսունմեկ դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն Պայմանագրի՝ մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 2026 թվականի մարտի 31-ը:

2026 թվականի մարտի 25-ի գրությամբ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ օբյեկտիվ պատճառներով չի կարող ամբողջ ծավալով իրականացնել պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը, մասնավորապես՝ 10-րդ չափաբաժնով նախատեսված հեղուկ օճառի և 15-րդ չափաբաժնով նախատեսված ապակի մաքրելու միջոցի մատակարարումը, և խնդրել է լուծել պայմանագիրը տվյալ չափաբաժինների մասով: Միաժամանակ, մարտի 26-ին Ընկերության կողմից ներկայացվել են որակավորման և պայմանագրի ապահովումների գումարների վճարումը

հավաստող համապատասխան փաստաթղթերը (ընդհանուր վճարվել է 37175 ՀՀ դրամ): Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Ծառայությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ 10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով՝ համարելով այն լուծված, պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ

մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով, որ «Կենցաղային քիմիայի գործարան» ՍՊԸ-ի կողմից վճարվել են որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները և ներկայացվել են դրանք հավաստող համապատասխան փաստաթղթերը, Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշում լիազորված մարմին չի ներկայացվում:

Հարգանքով՝

ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարող՝ Կարեն Գասպարյան
010532358